# Երևանի Մ.Հերացու անվան
# Պետական Բժշկական Համալսարան

## Ֆոկուս խմբային հարցման ամփոփում

*Կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոն*
*10.05.2024թ.*

**Կրթական ծրագիր՝** «Առողջապահության կազմակերպում և կառավարում» մագիստրոսական ծրագիր

**Մասնակիցներ՝** ծրագրի առաջին կուրսի ուսանողներ

**Անցկացման ձևաչափ՝** բաց քննարկում

**Հարցազրուցավար՝** Մերի Սևունի (Հանրային առողջության ֆակուլտետի որակի ապահովման պատասխանատու)

### Հարցման ընթացքում վերհանված հիմնական խնդիրները

1. **Ծրագրի բովանդակության և ակնկալիքների անհամապատասխանություն**

**1. Ծրագրի կառուցվածքային բարելավում**

- Վերանայել կրթական ծրագրի կառուցվածքը և ապահովել առարկաների տրամաբանական հաջորդականությունը
- Ինտեգրել բովանդակությամբ նման առարկաները (օրինակ՝ քանակական և որակական հետազոտությունների դասընթացները)

**2. Մասնագիտացման հնարավորությունների ներդրում**

- Ծրագրում ներդնել մասնագիտացման ուղղություններ, որպեսզի ուսանողները կարողանան խորացնել գիտելիքները ընտրված ոլորտներում

**3. Դասացուցակի օպտիմալացում**

- Վերանայել դասաժամերի բաշխումը և խուսափել նույն առարկայի համենօրյա անցկացումից
- Ավելացնել դասաժամերը կարևոր և հիմնարար առարկաների համար, հատկապես բիոստատիստիկայի

**5. Գործնական բաղադրիչի զարգացում**

- Ավելացնել գործնական և կիրառական ուսուցման տարրեր, որոնք կօգնեն հասկանալ գիտելիքների կիրառման ոլորտները

**6. Դասավանդման մեթոդների բարելավում**

- Կատարելագործել դասավանդման մեթոդները և ապահովել խմբային աշխատանքի ավելի արդյունավետ կազմակերպում

**7. Գնահատման համակարգի վերանայում**

- Վերանայել գնահատման ձևերը՝ որոշ դեպքերում քննությունները փոխարինելով ստուգարքներով
- Պահպանել ընթացիկ գնահատումները, որոնք նպաստում են նյութի համակարգված յուրացմանը

**8. Ուսումնական նյութերի հարստացում**

- Տրամադրել լրացուցիչ գրականության ցանկ, հատկապես անգլերեն աղբյուրներով
- Ապահովել դասընթացների ավելի խորքային ուսուցում

## Եզրակացություն

Ֆոկուս-խմբային հարցման արդյունքները ցույց են տալիս, որ «Առողջապահության կազմակերպում և կառավարում» մագիստրոսական ծրագիրը ուսանողների կողմից ընդհանուր առմամբ գնահատվում է որպես բովանդակային և մասնագիտական զարգացման համար կարևոր կրթական ծրագիր: Ուսանողները բարձր են գնահատում առանձին դասընթացների, մասնավորապես՝ բիոէթիկայի կիրառական արժեքը, ինչպես նաև դասախոսների մասնագիտական կարողությունները:

Միևնույն ժամանակ, հետազոտությունը բացահայտել է մի շարք համակարգային խնդիրներ՝ կապված կրթական ծրագրի կառուցվածքի, առարկաների միջև բովանդակային ինտեգրման, դասաժամերի բաշխման և ուսումնական ծանրաբեռնվածության հետ: Ուսանողների կարծիքով, որոշ առանցքային առարկաների համար հատկացված ժամանակը բավարար չէ, իսկ ծրագրում առկա է գործնական բաղադրիչի և կիրառական ուղղվածության ուժեղացման անհրաժեշտություն:

Ընդհանուր առմամբ, ուսանողների առաջարկները ուղղված են ծրագրի կառուցվածքային և բովանդակային կատարելագործմանը՝ մասնավորապես առարկաների ավելի արդյունավետ ինտեգրմանը, առանցքային դասընթացների խորացմանը, գործնական բաղադրիչի ընդլայնմանը և դասավանդման ու գնահատման մեթոդների օպտիմալացմանը: Այս փոփոխությունները կարող են նպաստել կրթական ծրագրի արդյունավետության բարձրացմանը և ստացված գիտելիքների ավելի կիրառելի բնույթ ապահովելուն: